ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2021թ. օգոստոսի 31-ի առերես նիստի

Օրակարգ

1. 2021 – 2022 ուսումնական տարվա մեկնարկի մասին

/Զեկուցող՝ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյան/

2. Ընթացիք հարցեր

1. Ամբիոնի վարիչ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյանը նախքան նիստի սկսելը ողջունեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմին, մաղթեց հաջող ուսումնական գործունեություն: Կապված 2021 – 2022 ուսումնական տարվա մեկնարկի հետ, նշվեց, որ դասերը կազմակերպվելու են հիբրիդային ձևաչափով, համապատասխանաբար կազմվել է դասացուցակը, ամբիոնի մասնագետի կողմից google classroom հարթակում ստեղծվել են բոլոր class-երը, ներկա պահին իրականացվում են դասախոսների և ուսանողների կցման աշխատանքներ: Կարևորվեց նաև սեղմ ժամանակահատվածում յուրաքանչյուր դասախոսի կողմից դասընթացների համապատասխան ԱՈՒՄՓ-երի, թեմատիկ տրոհումների, ընթացիկ ստուգումների հարցաշարերի և քննական հարցաշարերի տեղադրումը: Կարևորվեց նաև մագիստրատուրա կրթական ծրագրի կուրսերի, բակալավր հեռակա կրթական ծրագրերի ձևավորման ուղղությամբ դասախոսների կողմից իրազեկման, ուղորդման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, քանի որ դրանով կարող է պայմանավորված լինել նաև դասաժամերի բաշխման աշխատանքները, ծանրաբեռնվածությունն առհասարակ:

Թ. Ազատյանի կողմից կարևորվեց նաև ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում COVID–19-ի հետ պայմանավորված անվտանգության կանոնների, տարածական հեռավորության պահպանումը:

Թերեզա Ազատյանի կողմից ներկայացվեց և դրվեց քվեարկության ամբիոնի նիստերի ժամանակացույցը և 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքային պլանը:

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին 18-ը, կողմ քվեարկեց 18-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցեր

- **Լսեցին –** Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Ազարյանի կողմից ներկայացված <<Հատուկ մանկավարժական տերմինների բացատրական բառարան>>-ի հաստատման հարցը:

Արտահայտվեցին – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտներ՝ Թերեզա Ազատյանը, Մարինե Մարությանը, Հասմիկ Մկրտչյանը, Լուսինե Բաբայանը:

Որոշեցին – միջնորդել ֆակուլտետի խորհրդին հաստատելու պրոֆեսոր Ռոբերտ Ազարյանի կողմից ներկայացված <<Հատուկ մանկավարժական տերմինների բացատրական բառարան>>-ը:

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին 18-ը, կողմ քվեարկեց 18-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ **Թերեզա Ազատյան**

Նիստի քարտուղար՝ **Սվետլանա Մուրադյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2021թ. սեպտեմբերի 28-ի առցանց նիստի

https://meet.google.com/xtu-odux-yxc?authuser=0

Օրակարգ

1. 2021 -2022 ուս տարվա հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրատուրա 1-ին կուրսերի մագիստրոսական թեզերի քննարկում և հաստատում:

/Զեկուցող՝ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյան/

2. Google classroom էլ.հարթակի մշտադիտարկումների մասին

/Զեկուցող՝ դասախոս Մարինա Մկրտչյան/

3. 2021-2022 ուս տարվա ամբիոնի պրոֆերադասախոսական անձնակազմի գիտահետազոտական աշխատանքների մասին

/Զեկուցող՝մ.գ.թ. դոցենտ Սվետլանա Մուրադյան/

4. Ընթացիք հարցեր

1. Ամբիոնի վարիչ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյանը ներկայացրեց 2021 - 2022 ուսումնական տարվա հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրատուրա 1-ին կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը: Համաձայն որի ընդգծվեց, որ սահմանված ժամկետում ծանրաբեռնվածության համաձայն բոլոր ղեկավարները ամբիոն են ներկայացրել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները: Ներկայացված թեմաները

հասանելի են եղել ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի բոլոր ներկայացուցիչներին և քննարկվել են համատեղ: Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների վերջնական վերանայված և համալրված տարբերակները ներկայացվել են ֆակուլտետի խորհուրդի հաստատմանը:

Մագիստրատուրա 1-ին կուրսերում բաշխումն իրականացվել է մասնագիտություններում ըստ ուսանողների նախնական թվակազմի, որը ևս անհրաժեշտ կլինի վերանայելու:

Թ. Ազատյանն այս համատեքստում կարևորեց հանրության շրջանում մասնագիտական իրազեկմանն ուղղված աշխատանքների հնարավորինս ակտիվ իրականացումը:

Ամբիոնի վարիչ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյանը առաջարկեց հաստատել 2021 - 2022 ուսումնական տարվա հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրատուրա 1-ին կուրսերի մագիստրոսական թեզերի թեմաները:

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. Google classroom էլ.հարթակի մշտադիտարկման արդյունքները ներկայացրեց ամբիոնի դասախոս Մարինա Մկրտչյանը: Մ. Մկրտչյանը նշեց, որ ամբիոնը բավականին հետամուտ է կազմակերպվող աշխատանքներին, ըստ ժամանակացույցի ներկայացված պահանջներին: Ընդգծվեց նաև, որ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հարթակներում տեղադրվել են ԱՈՒՄՓ-ները, առարկայական տրոհումները, միջանկյալ ստուգումների և քննությունների հարցաշարերը:

Կարևորվեց յուրաքանչյուր դասի տիրույթում համապատասխան գրառումների, օրվա թեմայի, սքրին շոթերի տեղադրումը, որը նույնպես կփաստի դասի լիիրավ իրականացման մասին: Ընդգծվեց նաև թեմա տիրույթում համապատասխան թեմայի ամբողջական անվանման տեղադրումը:

Որպես խնդրահարույց դեպք ընդգծվեց առանձին դեպքերում հին ձևաչափերով թափեփների առկայությունը, ամսաթվերի անհամապատասխանությունը, որը անհրաժեշտ է պարտադիր վերանայել:

3. Ամբիոնի մ.գ.թ. դոցենտ Սվետլանա Մուրադյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա ամբիոնի պրոֆերադասախոսական անձնակազմի գիտահետազոտական աշխատանքների ընթացքը: Ընդգծվեց, որ հաշվետու ուստարվա ընթացքում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հրատարակվել է թվով 28 գիտական հոդվածներ ցիտվող պարբերականներում, որից 14-ը հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կողմից և 14-ը լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի կողմից: Գիտական հոդվածները հիմնականում տպագրվել են РИНЦ , Elibrary, Google Scholar, Index Copernicus, CrossRef ցիտվող պարբերականներում: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել մի շարք տեղային և միջազգային գիտական սեմինարների, գիտաժողովների: Իրականացվել է նաև համահեղինակային ուսումնական և ուսումնաօժանդակ ձեռնարկների տպագրումներ: Միևնույն ժամանակ ընդգծվեց նաև, որ տպագրված գիտական հոդվածներից 9-ը (7-ը հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կողմից և 2-ը լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի կողմից) տպագրվել են ՀՊՄՀ-ի Armenian journal of special education / Scientific methodological journal –ում:

Ս. Մուրադյանն ընդգծեց նաև, որ գիտահետազոտական աշխատանքների թվակազմը հաշվետու ժամանակահատվածում որոշակիորեն զիջում է նախորդ տարվա տպագրումների քանակին, որն էլ իր հերթին պայմանավորված է երկրում տիրող պատերազմական իրավիճակով, ինչպես նաև համաճարակով:

Ընթացիկ հարցեր

- **Լսեցին** – Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի մանկավարժական գիտությունների թեկնածու Հասմիկ Սարգսյանին միջնորդելու ֆակուլտետի խորհրդին որպես ասիստենտ ներկայացնելու հարցը:

Արտահայտվեցին – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտներ՝ Թերեզա Ազատյանը, Զաբելլա Զոհրաբյանը, Հասմիկ Մկրտչյանը, Լուսինե Բաբայանը:

Որոշեցին – միջնորդել ֆակուլտետի խորհրդին մ.գ.թ. դոցենտ Հասմիկ Սարգսյանին որպես ասիստենտ ներկայացնելու հարցը:

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ **Թերեզա Ազատյան**

Նիստի քարտուղար՝ **Սվետլանա Մուրադյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2021թ. հոկտեմբերի 29-ի առցանց նիստի

https://meet.google.com/xtu-odux-yxc?authuser=0

1. Մագիստրատուրա 2-րդ կուրսի թեզերի կատարման ընթացքի մասին

/Զեկուցողներ՝ ամբիոնի՝ մագիստրոսական թեզերի գիտական ղեկավարներ/

2. Պրակտիկայի ընթացքի մասին

/Զեկուցող՝ մ.գ.թ. դոցենտ Վերա Մարուքյան/

3. Ընթացիք հարցեր

1. Ամբիոնի վարիչ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թերեզա Ազատյանը ներկայացնելով օրակարգի հարցերը՝ առաջարկեց գիտական ղեկավարներին ներկայացնելու մագիստրատուրա 2-րդ կուրսի թեզերի կատարման ընթացքը: Միևնույն ժամանակ Թ. Ազատյանը հորդորեց բոլոր գիտական ղեկավարներին զեկույցում հատկապես ընդգծել խնդրահարույց դեպքերը, առկա խոչընդոտները: Թ. Ազատյանը կարևորեց նաև համապատասխան հաշվետվությունների, ինչպես նաև խնդրահարույց դեպքերի առկայության պայմաններում նաև զեկուցագրերի գրավոր ներկայացնելու անհրաժեշտությունը: Գրեթե բոլոր գիտական ղեկավարները որպես խնդրահարույց դեպք ընդգծեցին կրթական հաստատությունների առցանց և առերես ձևաչափով աշխատանքների հերթափոփոխումն ու կազմակերպումը, ինչպես նաև մագիստրոսների առցանց ուսումնական աշխատանքների կազմակերպումը:

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանի ելույթին հաջորդեցին գիտական ղեկավարները: Համաձայն որի յուրաքանչյուր գիտական ղեկավար հիմնավոր ներկայացրեց մագիստրատուրա 2-րդ կուրսի թեզերի կատարման ընթացքը, հաշվետու ժամանակահատվածում ծավալվող

աշխատանքները, առկա խնդիրներն ու հնարավորությունները: Այսպիսով, ընդհանրացնելով ստացված տեղեկությունները, կարելի է ասել, որ չնայած առկա խնդրահարույց դեպքերի, այնուամենայնիվ աշխատանքները կարելի է գնահատել գոհացուցիչ:

2. Պրակտիկայի ընթացքը ներկայացրեց ամբիոնի պրակտիկայի պատասխանատու, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Վերա Մարուքյանը: Մագիստրատուրա 2-րդ կուրսի պրակտիկայի կազմակերպման գործընթացում Վ. Մարուքյանը կարևորեց մագիստրոսների ակտիվ ընդգրկվածությունը կազմակերպվող աշխատանքներում: Ընդգծվեց, որ պրակտիկայի համար ստեղծվել են համապատասխան պանակներ, բոլոր մագիստրոսները և գիտական ղեկավարները կցվել են էլեկտրոնային հարթակներին: Ընդգծվեց, որ բոլոր ուսանողները հնարավորություն ունեն նախնական պայմանավորվածության համաձայն կցվելու այլ հարթակներին և մասնակցելու այլ դասերի: Վ. Մարուքյանը ընդգծեց նաև, որ մագիստրոսները կարող են նաև յուրովի մասնակցություն ունենալ միջանկյալ ստուգման շաբաթին:

Այնուհետև Վ. Մարուքյանը ընդգծեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրենց շարունակական մանկավարժական պրակտիկան են անցնում երրորդ կուրսի ուսանողները: Համապատասխան ժամանակահատվածում ամբիոնի մասնագետի կողմից ուսանողների համար ստեղծվել են էլեկտրոնային պանակներ, կցվել են բոլոր ուսանողներն ու պրակտիկայի ղեկավարները, մեթոդիստները: Ուսանողները ակտիվ մասնակցում են կազմակերպվող աշխատանքներին, ստանում են հանձնարարություններ, ղեկավարների կողմից: Ընդհանուր առմամբ իրավիճակը գնահատվեց գոհացուցիչ, խնդրահարույց դեպքեր չառանձնացվեցին:

3. Ընթացիկ հարցեր

- Թերեզա Ազատյանը կարևորեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ակտիվ մասնակցությունը կազմակերպվող աշխատանքներին, միջոցառումներին: Միևնույն ժամանակ կարևորվեց նաև բուհի 100 ամյակին ընդառաջ ֆակուլտետի կողմից կազմակերպվող միջոցառումներում ամբիոնի ակտիվ ընդգրկվածությունն ու մասնակցությունը: Համաձայն որի ֆակուլտետը ներկայացրել է նախատեսվող միջոցառումների ցանկ /կից ֆայլում/: Կազմակերպվող աշխատանքներն առավել լիիրավ իրականացնելու համար ֆակուլտետում պետք է ձևավորվի կազմ կոմիտե ամբիոնի վարիչների, դեկանի, գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալի անմիջական

մասնակցությամբ: Միևնույն ժամանակ ամբիոնից որպես թեկնածուներ առաջարկվեցին մ.գ.թ. դոցենտ Սուսաննա Մուրադյանը և մ.գ.թ. Հասմիկ Սարգսյանը:

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին 19-ը, կողմ քվեարկեց 19-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝ Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2021թ. նոյեմբերի 26-ի առցանց նիստի

https://meet.google.com/xtu-odux-yxc?authuser=0

Օրակարգ

1. Առարկայական նկարագրերի բովանդակային վերանայման արդյունքների քննարկում, ամփոփում:

/Զեկուցողներ՝ Հանձնաժողովի արդամներ/

2. ՀՊՄՊ 100-ամյակի միջոցառումների մասին:

/Զեկուցող՝ Սվետլանա Մուրադյան/

3. Ընթացիկ հարցեր

1. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ողջունեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմին և, անդրադառնալով օրակարգի առաջին հարցին, հիշեցրեց, որ դեռևս հոկտեմբեր ամսին որոշում է կայացվել վերանայել առարկայական նկարագրերի, ուսումնական փաթեթների ու տրոհումների բովանդակային մասը: Համաձայն որի ամբիոնի վարիչի հանձնարարականով ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմից ընտրվել և կազմվել է աշխատանքային խումբ, հստակեցվել է վերջնաժամկետ ներկայացված գործընթացն իրականացնելու նպատակով: Թ. Ազատյանը նշեց, որ խմբի անդամների կողմից կատարվել է համապատասխան աշխատանքը, ամբիոն է ներկայացվել գրավոր հաշվետվություններ,

իսկ ներկաներին առաջարկվեց հակիրճ և ամփոփ ներկայացնել կատարված աշխատանքները, առկա թերությունները և դրական կողմերը։

Աշխատանքային խմբի անդամների կողմից հիմնականում կարևորվեց դասախոսական նյութերի բովանդակային ճշգրիտ ընտրությունը և համապատասխանությունը, դասախոսական նյութերում ժամանակակից մեթոդների կարևորումը և ներկայացումը, ուսանողների կոմպետենցիաների շեշտադրումը։

Հատկապես որպես խնդրահարույց որոշ դեպքեր առանձնացվեցին առարկայական նկարագրերում և դասախոսական նյութերում թեմաների վերնագրերի որոշակի բառային անհամապատասխանություններ, առանձնացվեցին և կարևորվեցին որոշ դեպքերում առարկայական նկարագրերում բաղադրիչների որոշակի վերանայման անհրաժեշտություն։ Միևնույն ժամանակ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից կարևորվեց առարկայի շրջանակներում դասավանդվող թեմաների հաջորդական կապի հնարավորինս պահպանումը։

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը դեկտեմբերի երեքը սահմանելով որպես վերջնաժամկետ առաջարկեց դասախոսական կազմին հաշվի առնելով կատարված դիտարկումները առավել հետևողական լինել և վերանայել առարկայական նկարագրերի, ուսումնական փաթեթների ու տրոհումների բովանդակային մասը։

2. Սվետլանա Մուրադյանը անդրադառնալով օրակարգի երկրորդ հարցին կարևորեց ՀՊՄՀ-ի 100-ամյակին նվիրված միջոցառումների հավուր պատշաճ կազմակերպման և իրականացման անհրաժեշտությունը։ Ս. Մուրադյանը ընդգծեց ֆակուլտետի, համապատասխան ամբիոնների կողմից արդեն իսկ հստակեցված և ներկայացված միջոցառումների ցանկը, որոնք իրենց մեջ ներառում են տեղային և միջազգային գիտագործնական գիտաժողովներ, սեմինարներ, կլոր սեղան քննարկումներ, ֆլեշ-մոբեր, բաց դասեր և այլն։ Կարևորեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը և նախաձեռնողականությունը կազմակերպվող աշխատանքներում։ Միևնույն ժամանակ նշվեց, որ ՀՊՄՀ-ի 100-ամյակին ընդառաջ ֆակուլտետից պահանջվել է ներկայացնել

պատի օրացույցի մշակման համատեքստում ֆակուլտետի էջի ձևավորումը, որը ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչների հետ համատեղ քննարկման արդյունքում մշակվել և արդեն իսկ ներկայացվել է պատասխանատուներին: Ընդգծվեց նաև, որ նախատեսվել է ՀՊՄՀ-ի 100-ամյակի կապակցությամբ ձևավորել և հրատարակել ֆակուլտետի պատմաժամանակագրական ձեռնարկ, որի աշխատանքների կոորդինացման համատեքստում ֆակուլտետի երկու ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմից ընտրվել և կազմվել է աշխատանքային խումբ: Նախատեսվող աշխատանքները քննարկվել են խմբի անդամների հետ համատեղ հանդիպման ժամանակ, հստակեցվել և պլանավորվել են աշխատանքները, սահմանվել է վերջնաժամկետ նյութերի ամբողջացման հետ կապված: Միևնույն ժամանակ յուրովի կարևորվեց ՀՊՄՀ-ի թանգարանում հատուկ և ներառական կրթության ֆակուլտետին հատկացված գիտական աշխատանքների ցուցափեղկի վերանայումը և արժեքավոր տեղեկատվությամբ, գիտամեթոդական գրականությամբ թարմացումը, արխիվային նյութերի վերանայումը, ինչպես նաև ֆակուլտետի մասին պատմող տեսասահիկի մշակումն ու տրամադրումը:

Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին –** Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից ստորև ներկայացված մեթոդական ուղեցույց ձեռնարկների ֆակուլտետի խորհրդին միջնորդելու հաստատելու հարցը.

<<Արդյունավետ հարմարեցումներ: Որակյալ կրթություն>> մանկավարժների համար նախատեսված մեթոդական ուղեցույց ձեռնարկ,

<<Ուսուցչի օգնականի ձեռնարկ>> մեթոդական ուղեցույց,

<<Ուսումնական նյութերի հարմարեցումներ: <<Մայրենի 1>> և <<Մաթեմատիկա 1>> աշխատանքային գիրք-տետրերի>> մեթոդական ուղեցույց:

Արտահայտվեցին – մ.գ.թ. դոցենտներ՝ Թերեզա Ազատյանը, Զաբելլա Զոհրաբյանը, Սուսաննա Մուրադյանը, Սվետլանա Մուրադյանը:

Որոշեցին – ֆակուլտետի խորհրդին միջնորդել հաստատելու Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից ներկայացված մեթոդական ուղեցույց ձեռնարկները:

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին 17-ը, կողմ քվեարկեց 17-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. **Լսեցին** – Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հոգեբանական գիտությունների թեկնածու Լիլիթ Կարապետյանին միջնորդելու ֆակուլտետի խորհրդին որպես ասիստենտ ներկայացնելու հարցը:

Արտահայտվեցին – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտներ՝ Թերեզա Ազատյանը, Զաբելլա Զոհրաբյանը, Հասմիկ Մկրտչյանը:

Որոշեցին – միջնորդել ֆակուլտետի խորհրդին հ.գ.թ. Լիլիթ Կարապետյանին որպես ասիստենտ ներկայացնելու հարցը:

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին 17-ը, կողմ քվեարկեց 17-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ **Թերեզա Ազատյան**

Նիստի քարտուղար՝ **Սվետլանա Մուրադյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2021թ. դեկտեմբերի 7-ի առցանց նիստի

https://meet.google.com/xtu-odux-yxc?authuser=0

Օրակարգ

1. Ամբիոնի հայցորդների ատեստավորում:

/Ամբիոնի հայցորդներ/

2. Պրակտիկայի կազմկարեպման քննարկում:

/Վերա Մարուքյան/

1. **Լսեցին** – ամբիոնի հայցորդ Անուշ Հարութի Ասլանյանի «Զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների հետ աշխատող ուսուցիչների մանկավարժական աջակցության մոդելավորումը» թեմայով ատենախոսության ատեստավորման հարցը /գիտական ղեկավար մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյան/:

Արտահայտվեցին – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտներ՝ Թերեզա Ազատյանը, Մարինե Մարությանը, Ինեսսա Հարությունյանը, Լիլիթ Սարատիկյանը:

Որոշեցին – ատեստավորել ամբիոնի հայցորդ Անուշ Հարութի Ասլանյանին:

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. **Լսեցին** – ամբիոնի հայցորդ Սիփան Արամայիսի Ասատրյանի «Չտեսնող դպրոցականների լսողական ընկալման զարգացման մանկավարժական պայմանները» թեմայով ատենախոսության ատեստավորման հարցը /գիտական ղեկավար մ.գ.դ. պրոֆեսոր Ռոբերտ Ազարյան/:

Արտահայտվեցին – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտներ՝ Թերեզա Ազատյանը, Սվետլանա Մուրադյանը, Ալինա Մանուկյանը, Կիմ Սարուխանյանը, Արաքսյա Սվաջյանը:

Որոշեցին – ատեստավորել ամբիոնի հայցորդ Սիփան Արամայիսի Ասատրյանին:

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. **Լսեցին –** ամբիոնի հայցորդ Անի Շահբազյանի «Ասպերգերի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքների կազմակերպման մանկավարժական պայմանները» թեմայով ատենախոսության ատեստավորման հարցը /գիտական ղեկավար մ.գ.թ. դոցենտ Արաքսյա Սվաջյան/:

Արտահայտվեցին – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտներ՝ Թերեզա Ազատյանը, Սուսաննա Մուրադյանը, Կիմ Սարուխանյանը:

Որոշեցին – ատեստավորել ամբիոնի հայցորդ Անի Շահբազյանին:

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. **Լսեցին –** ամբիոնի հայցորդ Հայկուհի Ադամյանի «Սովորողի կրթական կարիքի գնահատումը որպես անհատական ուսուցման պլանավորման կարևորագույն նախապայման» թեմայով ատենախոսության ատեստավորման հարցը /գիտական ղեկավար մ.գ.թ. դոցենտ Արաքսյա Սվաջյան/:

Արտահայտվեցին – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտներ՝ Թերեզա Ազատյանը, Զաբելլա Զոհրաբյանը, Անահիտ Մանուկյանը:

Որոշեցին – ատեստավորել ամբիոնի հայցորդ Հայկուհի Ադամյանին:

2. Ամբիոնի պրակտիկայի պատասխանատու Վերա Մարուքյանը կարևորելով պրակտիկայի կազմակերպման գործընթացը ևս մեկ անգամ կարևորեց թե՛ ուսանողների, թե՛ դասախոսական կազմի, թե՛ համապատասխան հաստատությունների անձնակազմի համար պրակտիկայի կազմակերպման ընթացքում հարմարավետության և միաժամանակ արդյունավետության ապահովումը։ Վ. Մարուքյանը նշեց, որ ուսանողների կողմից բազմիցս հնչում են տարբեր կարծիքներ, ոմանք կարծում են, որ առցանց տարբերակը հարմարավետ է, իսկ մյուսները հակառակը։ Հետևաբար Վ. Մարուքյանը հորդորեց դասախոսական կազմից ներկայացնել առավել օպտիմալ առաջարկներ, կարծիքներ, որոնք կլինեն ի նպաստ պրակտիկայի կազմակերպման արդյունավետության ապահովման։

Միևնույն հարցի շրջանակներում ամբիոնի մ.գ.թ. դոցենտ Ինեսսա Հարությունյանի կողմից առաջարկվեց պրակտիկայի կազմակերպման ընթացքում կարևորել և հստակ ընդգծված ուսանողներին առաջադրել կատարելու որոշակի աշխատանք, որն իր հերթին յուրովի կնպաստի ուսանողի կողմից առավել պատասխանատու կերպով աշխատանքի կատրման, որն էլ իր հերթին կլինի առավել կիրառական։ Առաջարկվեց նաև պրակտիկայի կազմակերպման ընթացքում, օրինակ, ի սկզբանե յուրաքանչյուր ուսանողի կցել մեկ երեխայի և ողջ ընթացքում աշխատանքները ծավալվեն համապատասխան երեխայի հետ, որն էլ կներկայացվի հաշվետվության ձևով։

Ամբիոնի մ.գ.թ. դոցենտ Արաքսյա Սվաջյանի կողմից ամեն պարագայում կարևորվեց պրակտիկայի առերես կազմակերպման ձևաչափը, որի հետ կապված հորդորվեց հաստատությունների, այդ թվում նաև ներառական ուսումնական հաստատությունների ընտրության հարցում առաջնորդվել հենց այդ տեսանկյունից և այդ սկզբունքով։ Պրակտիկայի հաստատությունների ընտրության հարցում հատուկ շեշտադրվեց և կարևորվեց ներառական ուսումնական հաստատությունների դերը և լիիրավ ընդգրկելու կարևորությունն ու անհրաժեշտությունը։

Գարծընկերների կարծիքը կիսեց նաև ամբիոնի մ.գ.թ. դոցենտ Լիլիթ Սարատիկյանը՝ կարևորելով պրակտիկայի առերես կազմակերպման անհրաժեշտությունը:

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ Թերեզա Ազատյան

Նիստի քարտուղար՝ Սվետլանա Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2021թ. դեկտեմբերի 27-ի առեես նիստի

Օրակարգ

1. Մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերի մագիստրոսական թեզերի և հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների կատարման մասին:

/Զեկուցողներ՝ աշխատանքների գիտական ղեկավարներ/

2. 2021-2022 ուստարվա ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:

/Զեկուցող՝ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյան/

3. Ընթացիկ հարցեր

1. Մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերի մագիստրոսական թեզերի և հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների կատարման մասին զեկուցեցին գիտական ղեկավարները, ինչպես նաև ամբիոնի վարիչի հրահանգով ամբիոն ներկայացրեցին նաև հաշվետվությունների թղթային տարբերակները: Յուրաքանչյուր գիտական ղեկավար ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքների ընթացքը, առկա խնդիրները:

Համաձայն ստացված հաշվետվությունների և զեկույցների յուրաքանչյուր գիտական ղեկավար, անկախ ուսումնական գործընթացի առցանց և առերես ձևաչափով կազմակերպման հերթագայման, մշտապես կապ է պահում համապատասխան ուսանողների հետ: Ստացված տեղեկատվության ընդհանրացման արդյունքում խնդրահարույց դեպքեր չեն գրանցվել, բոլորն էլ աշխատում են իրենց հնարավորությունների շրջանակներում:

Ամբիոնի վարիչ Թ. Ազատյանն առաջարկեց ստացված արդյունքները համարել գոհացուցիչ:

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին ….. -ը, կողմ քվեարկեց …..-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. 2021-2022 ուստարվա ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին զեկուցեց ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանի գլխավորությամբ հաստատվեցին քննաշրջանի քննական տոմսերը: Թերեզա Ազատյանը նշեց, որ համաձայն նախնական տեղեկատվության քննաշրջանը մեկնարկելու է ս.թ. հունվարի 12-ից առերես ձևաչափով և քննության գրաֆիկները կուղարկվեն ամբիոնի բոլոր դասախոսներին:

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ընդգծեց նաև, որ բակալավր կրթական ծրագրի հեռակայի դասերը մեկնարկելու է հունվարի 10-ից, մինչդեռ աշխատանքային գործունեությունը մեկնարկելու է հունվարի 3-ից: Ըստ նախապես ներկայացված ժամանակացույցի մշակվել և ներկայացվել է պրակտիկայի պաշտպանությունների գրաֆիկը: Թերեզա Ազատյանը հորդորեց պրակտիկայի պաշտպանությունների ընթացքում հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև պրակտիկայի ղեկավարներին, մեթոդիստներին լինել հնարավորինս օբյեկտիվ և հետևողական:

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին ամբիոնի վարիչը խնդրեց ամենայն պատասխանատվությամբ մոտենալ միջանկյալ ստուգումներին, համաձայն որի պահպանել առերես և առցանց ձևաչափերը, զերծ մնալ փոփոխություններից, պահպանել օբյեկտիվությունը:

Ընթացիկ հարցեր

1. Քննարկվեց և վերլուծվեց ՀՊՄՀ-ի 100-ամյակին նվիրված ֆակուլտետի գործառույթները, կատարված և նախագծված աշխատանքները: Կարևորվեց այդ

համատեքստում ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ակտիվ մասնակցությունը:

Նիստի նախագահ՝ **Թերեզա Ազատյան**

Նիստի քարտուղար՝ **Սվետլանա Մուրադյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2022թ. մարտի 30-ի առերես նիստի

Օրակարգ

1. Մագիստրատուրա 2-րդ կուրսերի, մագիստրոսական թեզերի, հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների ընթացքի քննարկում, նախապաշպանության գրաֆիկի հաստատում:

/Զեկուցող՝ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյան, գիտական ղեկավարներ/

2. Պրակտիկայի քննարկում /մագիստրատորուրա 1-ին կուրս, բակալավր 3-րդ կուրս/

/Զեկուցող՝

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտներ Վերա Մարուքյան/

3. Ընթացիք հարցեր

1. Մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին զեկուցեցին գիտական ղեկավարները, համաձայն որի յուրաքանչյուր գիտական ղեկավարի կողմից մանրամասնորեն ներկայացվեց մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը, առկա խնդրահարույց դեպքերը, հնարավոր լուծման տարբերակները: Միևնույն ժամանակ ընդգծվեց և կարևորվեց մագիստրոսների կողմից թեզերում հետազոտական բաղադրիչի ապահովման կարևորությունը: Մագիստրոսական թեզերի գիտական ղեկավարների կողմից որպես խնդրահարույց դեպք առանձնահատուկ շեշտադրվեց առցանց աշխատելու փաստը, որը յուրովի սահմանափակում է մագիստրոսների հետ առերես հանդիպումների հաճախականությունը:

Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանի կողմից առանձնակի կարևորվեց և շեշտադրվեց մագիստրոսների ինքնուրույնության բաղադրիչի, հետևողական աշխատանքների, բովանդակության և մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերի համապատասխանության կազմակերպումն ու ապահովումը։

2. Մագիստրատուրա 1-ին, բակալավր 3-րդ կուրսերի պրակտիկայի հարցը ներկայացրեց հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրակտիկայի պատասխանատու մ.գ.թ. դոցենտ Վերա Մարուքյանը։ Վ. Մարուքյանը ընդգծեց, որ ավարտվել է մագիստրոսի կրթական ծրագրի պրակտիկան, համաձայն որի բոլոր մագիստրոսներն իրենց պրչակտիկան անցկացրել են գիտական ղեկավարների անմիջական վերահսկողության պայմաններում։ Ըստ կարգի բոլորի համար նախապես ստեղծված են եղել էլեկտրոնային հարթակները, կցվել են և՛ գիտական ղեկավարները, և՛ մագիստրոսները։ Բոլոր մագիստրոսները նախապես հստակեցրել են իրենց շաբաթական բեռնվածությունը և ըստ այդմ իրականացրել են կիրենց պրակտիկան։ Խնդրահարույց դեպքեր որպես կանոն չեն արձանագրվել, պրակտիկան ընթացել է բնականոն հունով։

Միևնույն ժամանակ Վ. Մարուքյանը նշեց, որ բակալավր կրթական ծրագրի օլիգոֆրենոմանկավարժություն և սուրդոմանկավարժություն բաժնի երրորդ կուրսի ուսանողների պրակտիկան ընթանալու է <<Իմ ուղին>> ուսումնավերականգնողական ցերեկային կենտրոնում և <<Փոխօգնության կենտրոն>>-հասարակական կազմակերպությունում։ Արդեն իսկ կազմվել են հեռակա բակալավր կրթական ծրագրի ուսանողների պրակտիկաների պաշտպանության ժամանակացույցերը, որը ներկայացվել է պրակտիկայի վարչություն, ինչպես նաև դեկանատ։

Նիստի նախագահ՝ **Թերեզա Ազատյան**

Նիստի քարտուղար՝ **Սվետլանա Մուրադյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2022թ. ապրիլի 22-ի առերես նիստի

Օրակարգ

1. Մագիստրոսական թեզերի նախնական պաշտպանությունների ընթացքի մասին

/Զեկուցողներ՝ հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի մագիստրոսներ/

Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնն իրականացրել է նախնական պաշտպանություններ ս.թ. ապրիլի 18, 19, 20, 21-ին՝ հատուկ հոգեբանություն, հատուկ մանկավարժություն, օլիգոֆրենոմանկավարժություն, տիֆլոմանկավարժություն, սուրդոմանկավարժություն մասնագիտությունների շրջանակում: Նախնական պաշտպանություններին մասնակցել է ընդհանուր թվով 50 մագիստրոս, համապատասխանաբար, հատուկ հոգեբանություն՝ 13, հատուկ մանկավարժություն՝ 14, օլիգոֆրենոմանկավարժություն՝ 10, տիֆլոմանկավարժություն՝ 5, սուրդոմանկավարժություն՝ 8 մագիստրոս:

Նախնական պաշտպանությունների ընթացքում մագիստրոսներին տրվել է 10-12 րոպե ժամանակ, կարևորվել է հետազոտական բաղադրիչի առկայությունը և համապատասխան վերլուծությունը: Մագիստրոսները ներկայացրել են հետազոտության հիմնական նպատակը, խնդիրները, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Նիստի նախագահ՝ **Թերեզա Ազատյան**

Նիստի քարտուղար՝ **Սվետլանա Մուրադյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2022թ. հունիսի 22-ի առերես նիստի

Օրակարգ

1. Մագիստրատրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյուքների քննարկում, հաստատում:

/Զեկուցող՝ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյան/

2. 2022-2023 ուս տարվա ծավալի և ծանրաբեռնվածության մասին:

/Զեկուցող՝ մ.գ.թ. դոցենտ Թերեզա Ազատյան/

3. Ընթացիք հարցեր:

Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ներկայացրեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյուքներ: Համաձայն որի ներկայացվեց յուրաքանչյուր մասնագիտացման համար միջինացված արդյունքները, որտեղ ընդգծվեց, որ բակալավր կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգում ամբիոնը չի ունեցել շրջանավարտներ: Մինչդեռ մագիստրոսի կրթական ծրագրում ամբիոնն ունեցել է 50 շրջանավարտ, որից օլիգոֆրենոմանկավարժություն մասնագիտության 10 շրջանավարտ, որտեղ միջին գնահատականը կազմել է 79,30 միավոր, հատուկ մանկավարժություն մասնագիտությունն ավարտել է 14 շրջանավարտ միջին գնահատականը՝ 96,30, սուրդոմանկավարժություն մասնագիտություն՝ 8 շրջանավարտ միջին գնահատականը՝ 92,26, տիֆլոմանկավարժություն մասնագիտության 5 շրջանավարտ, որտեղ միջին գնահատականը կազմել է 94,76 միավոր, հատուկ հոգեբանություն մասնագիտության 13 շրջանավարտ, որտեղ միջին գնահատականը կազմում է 85,16 միավոր: Սակայն հատուկ հոգեբանության

մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի մեկ ուսանող ստացել է անբավարար գնահատական, որը սպասելի էր, քանի որ ողջ ուստարվա ընթացքում մագիստրոսը ունեցել է դժվարություններ, ղեկավարը զեկուցել է առկա խնդիրների մասին, ղեկավարի կողմից մշտապես կատարվել է խորհրդատվություն, սակայն ապարդյուն։

Ինչ վերաբերում է հեռակա ուսուցման համակարգին, ապա ամբիոնն ունեցել է օլիգոֆրենոմանկավարժության 5 շրջանավարտ, որտեղ միջին գնահատականը կազմում է 87,11 միավոր և տիֆլոմանկավարժության 5 շրջանավարտ, որտեղ միջին գնահատականը կազմում է 89,60 միավոր։ Բացի վերը ներկայացվածը ամբիոնն ունեցել է նաև 2 եռատարեցի ուսանողներ, ովքեր քննությունը հանձնել են քննական տոմսերով, գնահատվել են հինգ բալային համակարգով։

Թ. Ազատյանը մասնակիորեն անդրադարձավ նաև պետական քննական հանձնաժողովի նախագահի կողմից կատարված դիտարկումներին, առաջարկություններին, ուժեղ և թույլ կողմերին։ Համաձայն որի հատկապես առանձնացրեց և կարևորեց այն, որ ըստ համձնաժողովի նախագահի հանձնաժողովը համալրված է եղել բարեխիղճ, մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող կազմով, պաշտպանության գործընթացը մշտապես ընթացել է սահուն և առանց խոչընդոտների, բոլոր զեկուցումները ներկայացվել են սահիկաշարերով, կարևորվեց նաև այն հանգամանքը, որ պաշտպանություններին ներկա են եղել ղեկավարների մեծամասնությունը։ Ներկայացվեց նաև թույլ կողմերը, համաձայն որի որոշ աշխատանքների նպատակները և խնդիրները ձևակերպված էին ոչ հստակ, որոշ եզրակացություններ կրում էին ընդհանրական բնույթ, առանձին դեպքերում ուսանողները դժվարանում էին մեկնաբանել պարզ հարցեր։

Թերեզա Ազատյանը նշեց նաև հանձնաժողովի նախագահի կողմից կատարված առաջարկությունները, համաձայն որի հատկապես առաջարկվել է հստակեցնել աշխատանքների գլուխների և ենթագլուխների վերնագրերը, եզրակացությունները, նպատակները։

Թերեզա Ազատյանն առաջարկեց մագիստրատրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյուքները համարել գոհացուցիչ և հաստատել։

Ամբիոնի նիստի 20 անդամներից նիստին ներկա էին 20-ը, կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. Ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը ներկայացրեց 2022-2023 ուս տարվա ամբիոնի ծավալի և ծանրաբեռնվածության մասին: Համաձայն որի հստակ ընդգծվեց, որ ամբիոնն ունի ժամաքանակի նվազում, որը պայմանավորված է մի շարք խնդիրներով: Վերը ներկայացվածն էլ իր հերթին պայմանավորում է ամբիոնի բոլոր դասախոսների, այդ թվում նաև մրցույթով անցած ընտրված դասախոսների /իրենց դիմումին համաձայն/ դրույքաչափերի փոփոխություն: Ամբիոնն ունի երկու համատեղող աշխատակից, ովքեր կունենան սահմանված դրույքաչափ: Հատկապես առանձնացվեց տիֆլոմանկավարժության մասնագիտացումը, որը բավականին խնդրահարույց պատկեր է ներկայացնում գործող կուրսերի առումով, ինչն էլ իր հերթին խնդիր է դառնում ամբիոնի տիֆլոմանկավարժների դրույքաչափերի ապահովման հարցում: Թ. Ազատյանը նշեց նաև այն հանգամանքը, որ դրույքաչափերի նվազումը պայմանավորված է ոչ միայն դիմորդների քանակի նվազումով, այլև ավարտական ծանրաբեռնվածությունից ընթերականերին, գրախոսություններին հատկացվող ժամերի բացակայությամբ, ինչպես նաև լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի կողմից ամբիոնին փոխանցվող ժամերի բացակայությամբ:

Նիստի նախագահ՝ **Թերեզա Ազատյան**

Նիստի քարտուղար՝ **Սվետլանա Մուրադյան**